Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Այսօր մանկապարտեզում, դպրոցում, բուհ-ում, ընտանիքում, ցավոք, այնքան էլ ուշադրություն և աշխատանք չի տարվում հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ: Հասարակության մեջ ավելի ակտիվ մասը և առաջմղիչ ուժը երիտասարդությունն է: Այդ իսկ պատճառով այսօր խիստ կարևորում եմ հայրենսիրական դաստիարակությունը երիտասարդության շրջանում, քանզի այն օդի և ջրի պես պահանջ է ներկայացնում երիտասարդի համար: Երիտասարդը, որը վաղվա պետության կայացմանն ու հզորացմանը իր ներդրումը պետք է ունենա, անհրաժեշտ է, որ առաջնորդվի հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթներով: Ցավոք, այսօր խնդիրը դեռ կա, որը վերջնական լուծում է պահանջում: Որքան էլ չմտածենք դրա մասին, միշտ պետք է իմանանք ՀՀ-ի և ԼՂՀ-ի աշխարհաքաղաքական դիրքը ու հարևան պետությունների հետ ունեցած ոչ բարվոք հարաբերությունները:

Բայց և այնպես քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես երիտասարդական հասարակական կազմակերպությունները, մեծ գերխնդիր ունեն սերնդին տալ հայրենապաշտպան դաստիարակություն: Եվ հայրենի պետությունը պետք է ստատար կանգնի ազգայինը դավանող կազմակերպություններին: Քանզի ազգային գաղափարախոսությունը այլընտրանք չունի:

Կարեն Միրզոյան
«Հայրենյաց պաշտպան» ԵՀԿ

Ազգ և ժառանգություն

Հայոց ազգային գաղափարախոսության նպատակը հայ ժողովրդի գոյապահպանումն է իր էթնիկական տարածքում, նրա ազատ, անվտանգ, բնականոն ու բազմակողմանի զարգացումը :Ազգի գոյապահպանման առաջին հիմնապայմանը անկախ, ամբողջական Հայրենիքի առկայությունն է: Երկրորդ հիմնապայմանը անկախ պետականության առկայությունն է: Երրորդ հիմնապայմանը ազգային մշակույթի համակարգի առկայությունն է, ազգային մշակույթի ազգային դաստիարակության հիմնական լծակ լինելը:

Առանց ազգի Հայրենիք չկա, առանց Հայրենիքի ազգ: Հայրենիքի բովանդակությունը հողն է, ձևը ազգային մշակույթը:Առանց ազգային մշակույթի ազգային Հայրենիք չկա: Հողը ազգերի Հայրենիք է դառնում ազգային մշակույթով:

Ազգը կենդանի օրգանիզմ է, պատմաէթնիկական կատեգորիա: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ գործոնները: Լեզու, մշակույթ,պատմական հիշողություն, մտածողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեբանություն, նկարագիր, զգացում ազգասիրություն, հայրենասիրություն և հպարտություն, ոգի, ընտանիք, կրոն, ճաշակ, կենցաղ, էթնիկական ավանդույթներ ու սովորույթներ:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ճակատագրի ընդհանրությամբ հիշյալ ազգային գործոնների հիման վրա ձեռք է բերել իր ինքնությունը, ազգային դիմագիծը և ազգային անհատականությունը:

Ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների պահպանման ու զարգացման հիմնական միջոցը մշակույթն է: Առանց ազգային մշակույթի, ազգ գոյություն ունենալ չի կարող:Ահա թե ինչու մշակույթի, կրթության և գիտության համակարգերը իրենց բնույթով պետք է լինեն ազգային և մշտապես գտնվեն պետության ուշադրության կենտրոնում:

Հայոց Հայրենիքը պատմաէթնիկական հասկացություն է, այն ձևավորվել է դարերի ընթացքում և իր մեջ ընդգրկում է հայ էթնոսի ամբողջական պատմական ապրելատարածքը:Հայոց Հայրենիքը շնորհիվ հայկական մշակույթը ունի հայկական դիմագիծ, որի գոյությունը հավերժական է:Թուրքիան և Ադրեջանը պատմության արդի փուլում փորձում են մշակութային ցեղասպանության միջոցով Արևմտյան Հայաստանի հայկական դիմագիծը ոչնչացնել և դարձնել թուրքերի հայրենիք:

Ժողովրդի գոյապահպանման կարևորագույն գործոններից է պատմական հիշողությունը: Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Ազգի խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության ոչնչացումից: Այդ պատճառով էլ լեզուն և պատմությունը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման ամենակարևոր գործոններն են համարվում:

Արցախը, որպես մի պատմամշակութային երկիր, յուրատեսակ մարմին է, նրանում ավելի ուժեղ է բաբախում հայկական զարկերակը, նրանում ավելի խորն է հայկական շունչը: Իբրև կենդանի մարմին, Արցախը չի կարող հրաժարվել ոչ իր անցյալից, ոչ իր ապագայից

Ժողովուրդների պայքարը հայրենիքի անկախության համար հավերժական պրոցես է:Այն ժողովուրդները, որոնք դադարեցնում են պայքարը, նրանք կորցնում են հայրենիքը և կործանվում են:

Միանգամայն ճիշտ էր Հայոց ազգային դաղափարախոս Գարեգին Նժդեհը, երբ ընդունելով Խորհրդային Հայաստանի հայոց պետականության կորիզ լինելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, ավելացնում էր. «Ներկա Հայաստանը կազմում է հազիվ մեկտասներկուերորդը մեր պատմական Հայրենիքի: Դա Հայրենիք չէ, այլ հայրենի անկյուն»:

Հայ ժողովրդը, եթե կամենում է գոյատևել, պարտավոր է Ազգի, Հայրենիքի, Մշակույթի և անկախ պետականության գաղափարները դարձնել ազգային դաստիարակության առանցք:Ժողովուրդը պետք է նույնանա իր հայրենիքի հետ: Անկախ Հայրենիքը և պետականությունը պետք է լինեն յուրաքանչյուր հայի բարձրագույն գաղափարը: Ապրում և գոյատևում են այն ժողովուրդները, որոնք անձնազոհաբար պայքարում են իրենց Հայրենիքի անկախության համար:

Դրա վառ օրինակը մեր արցախյան ազատագրական պայքարն է:Խորհրդային միության գոյության ողջ ընթացքում Ադրբեջանը ձգտել է ամեն գնով մեզ զրկել մեր հայրենիքից: Արցախը մտցնելով իր կազմի մեջ ինտենսիվ կերպով ոչնչացրել, յուրացրել կամ ուրիշներին են վերագրել մեր մշակութային ժառանգությունը, ձգտել են մեր ժողովրդին կտրել իր պատմական տարածքից ու լեզվից, որպեսզի հեշտ լինի սպիտակ եղեռնի իրագործումը: Պետականության մնացուկների կորստի վտանգը խթանեց մեր պատմական հիշողության ու ազգային արժանապատվության արթնացմանը, և արցախահայությունն, ողջ հայ ազգը ոտքի ելավ պայքարելու հանուն իր էթնիկական տարածքի ազգային նյութական ու հոգևոր ժառանգության պահպանմանը: Արցախի տարածքում կատարվող հնագիտական պեղումների շնորհիվ հայկական մշակութային նոր արժեքների հայտնաբերմամբ հօդս ցնդեցին Արցախի մասին բոլոր կեղծ և շինծու տեսությունները :

Դրա վառ վկայությունն է վերջերս Շուշիում և Տիգրանակերտում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերված տիպիկ հայկական մշակութային հարուստ նյութերը:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ